## Հ Ա Մ Ա Ձ Ա Յ Ն Ա Գ Ի Ր  N 1

## ՀՀ ԱՆ «ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՇՏԱՊ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ» ՓԲԸ-Ի ԵՎ «ԹԱԼԻՆԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԲԸ-ի ՄԻՋԵՎ 06.04.2026թ. ԿՆՔՎԱԾ «ՀՀԱՆՇՕԾ-ԷԱՃԾՁԲ-2026/23-1» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՏՈՒՑՄԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Երևան «09 » Ապրիլի 2026թ.

ՀՀ ԱՆ «Հանրապետական շտապ օգնության ծառայություն» ՓԲԸ-ն, ի դեմս տնօրեն Սահակ Հակոբյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «ԹԱԼԻՆԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԲԸ-ն, ի դեմս տնօրեն Հարություն Կարապետյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, փոխադարձ համաձայնությամբ, հիմք ընդունելով 06.04.2026թ. կնքված N «ՀՀԱՆՇՕԾ-ԷԱՃԾՁԲ-2026/23-1» ծածկագրով պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 7.5 և 7.15 կետերը, կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

### 1. Համաձայնագրի առարկան

1.1. Հիմք ընդունելով պայմանագրի կատարման ապահովումը Պայմանագրով նախատեսված ծառայությունների վճարումը կատարվում է ապրանքների ընդունումից **հետո՝ 15 աշխատանքային օրվա ընթացքում:**

1.2. Կողմերը համաձայնեցին, որ Պայմանագրի Հավելված N 1-ով և Հավելված N 2-ով սահմանված ծառայության մատուցումը իրականացվում է ըստ անհրաժեշտության՝ Պատվիրատուի պահանջի հիման վրա: Եթե պայմանագրի գործողության ընթացքում Պատվիրատուի կողմից ծառայության մատուցման պահանջը ներկայացվել է ոչ ամբողջ ծավալի համար, ապա չմատուցված ծառայության մասով պայմանագիրը լուծվում է առանց համաձայնագիր կնքելու:

1.4. Սույն համաձայնագրով ուժի մեջ են դրվում Պայմանագրով կից ներկայացված բժշկական զննություն անցկացնող աշխատակիցների ցուցակով սահմանված բոլոր քանակները, որոնք ենթակա են մատուցման սույն համաձայնագրի և պայմանագրով սահմանված պայմաններին համապատասխան:

### 2. Այլ պայմաններ

2.1. Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է N «ՀՀԱՆՇՕԾ-ԷԱՃԾՁԲ-2026/23-1» ծածկագրով Պայմանագրի անբաժանելի մասը և գործում է մինչև Կողմերի միջև Պայմանագրով ստանձնված պարտավորությունների կատարման ավարտը:

2.2. Սույն Համաձայնագրում չնշված՝ Կողմերի Պայմանագրով ստանձնած իրավունքները և պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.3 Համաձայնագիրը կազմված է 1 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ: Հավելվածները հանդիսանում են Համաձայնագրի անբաժանելի մասը: Յուրաքանչյուր կողմին տրվում է Համաձայնագրի մեկական օրինակ:

**Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ Ո Ւ**

«Հանրապետական Շտապ Օգնության Ծառայություն» ՓԲԸ
Հասցե՝ ք.Գյումրի, Մազմանյան 3բ
ՀՎՀՀ 05500411
«ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» ՓԲԸ
ՀՀ 1570078724667200
Տնօրեն՝ Սահակ Հակոբյան

--------------------------------------------
(ստորագրություն) Կ.Տ

Ստորագրող
ՍԱՀԱԿ ՀԱԿՈԲՅԱՆ
3711840906

2026-04-09 15:35:28 GMT+04:00
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից

**Կ Ա Տ Ա Ր Ո Ղ**

«Թալինի բժշկական կենտրոն» ՓԲԸ
ՀՀ.ք Մ.Քոթանյան 10
«Արդշինբանկ» ՓԲԸ
ՀՀ 2476000141270010
ՀՎՀՀ 05305424
Տնօրեն՝ Հարություն Կարապետյան

Ստորագրող
ԱՐՄԵՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ
3004740230

2026-04-09 12:08:40 GMT+04:00
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից